



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԴԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

5 նոյեմբերի 2013թ. թիվ 272-Ա

**Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ  
ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 6-ի N 575-Ն և ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 224-Ա որոշումները՝

Որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լիլիա Աթաբեկի Հարությունյանին վերանշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Լ.Հարությունյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել փոփոխություն:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԴԵՏ**

2013թ. նոյեմբերի 5  
ք.Վանաձոր

**Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**